ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____2025թ. N_____-Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 48-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի «Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին» N 48-Ն որոշման հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Երևանի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև քաղաքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման, բարեկարգման կամ սույն Կարգով նախատեսված պարտադիր բարեկարգման այլ աշխատանքների կատարման միջոցով:».

2) 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները, հանքավայրերը և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:».

3) 4-րդ կետի 5-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով.

4) 4-րդ կետի 5-րդ ենթակետից հետո լրացնել նոր 6-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) հանքավայրերը շահագործող ընդերքօգտագործողների վրա:».

5) 5-րդ կետի 6-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

6) 5-րդ կետի 6-րդ ենթակետից հետո լրացնել նոր 7-րդ և 8-րդ ենթակետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«7) հանքավայրին հարակից ընդհանուր օգտագործման ճանապարհների բարեկարգումը, խճապատումը, ասֆալտի քերուկով նորոգումը.

8) հանքավայրին հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման աշխատանքները, մաքրության պահպանումը և դրանց ապահովման նպատակով հանքից դուրս եկող մեքենաների անիվների լվացումը, հանքի տարածքում ջրցան թնդանոթների կամ ջրցան այլ սարքավորումների տեղադրումը, օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրումը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ, որի տեխնիկական չափորոշիչները և հասանելիության պայմանները սահմանվում են Երևանի քաղաքապետի որոշմամբ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը տրամադրված ընդերքգօգտագործման թույլտվության հիման վրա ընդերքօգտագործողների կողմից հանքավայրերի շահագործման աշխատանքների իրականացման համար սույն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 48-Ն որոշման հավելվածի 5-րդ կետում լրացվող նոր 7-րդ և 8-րդ ենթակետերով սահմանված պայմանները գործում են սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամիս հետո:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 48-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսվում է, որ Երևանի քաղաքի ավագանին սահմանում է Երևանի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները և իրականացման կարգը:

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջները՝ Երևան քաղաքի ավագանին 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 48-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանել է Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը:

Որոշման հավելվածի 2-րդ կետով սահմանված է, որ պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Երևանի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև քաղաքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

Նույն հավելվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները: Կարգը տարածվում

է Երևան քաղաքի վարչական տարածքում տեղակայված (գտնվող) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների, առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների, այգիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի և տիրապետողների, ավտոկանգառների և ավտոկայանատեղերի սեփականատերերի և տիրապետողների, բացօթյա շուկաների և տոնավաճառների սեփականատերերի և տիրապետողների վրա:

Հավելվածի 5-րդ կետում նախատեսված են նույն որոշմամբ սահմանված պարտադիր բարեկարգման աշխատանքները:

Գործնականում Երևան քաղաքում հանքերի շրջակա միջավայրի վրա ազդեցության և օդի աղտոտվածությունը նվազեցնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել նույն որոշմամբ սահմանել պարտադիր բարեկարգման պահանջներ հանքերը շահագործող ընդերքօգտագործողների համար:

Նախագծով մասնավորապես առաջարկվում է նախատեսել, որ

- Հավելվածով սահմանված պարտադիր բարեկարգման պահանջը տարածվում է նաև Երևան քաղաքի վարչական սահմաններում տեղակայված (գտնվող) հանքերը շահագործող ընդերքօգտագործողների վրա:

- Պարտադիր բարեկարգման աշխատանքներ են՝ հանքի հարակից ընդհանուր օգտագործման ճանապարհների բարեկագումը, խճապատումը, ասֆալտի քերուկով նորոգումը, հանքից դուրս եկող մեքենաների անիվների լվացումը, հանքի տարածքում ջրցան թնդանոթների և/կամ ջրցան այլ սարքավորումների տեղադրումը, օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրումը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ, որի տեխնիկական չափորոշիչները և հասանելիության պայմանները սահմանվում են Երևանի քաղաքապետի որոշմամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ